ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառամուտ համայնք, հասցե 1փ. 32., հեռախոս 093612804
էլ. փոստ antaramut.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» մարտի 2020 թվական N 11 -Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-015-0033-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սեփականության իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով,Ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Սերյոժա Ոսկանյանի դիմումը.

Որոշում եմ.

1. Օրենքի ուժով 06-015-0033-0003 ծածկագրի տակ գտնվող 0.00679 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Սերյոժա, Հասմիկ և Անահիտ Ոսկանյանների սեփականության իրավունքը:

2.Հողամասը չի գտնվում ինժեներատրասպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում ,չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում ,հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ :

3.Վերականգնել և ճանաչել 0.00679 հա բնակելի տան կառուցապատման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով

պահանջվող շահերը չխախտող ,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992թ. կառուցված անասնագոմ 58.75 քմ, նկատմամբ Սերյոժյա,Հասմիկ,Անահիտ Ոսկանյանների սեփականության իրավունքը:

4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Անշարժ գույքերին տրամադրել փոստային հասցեներ՝ բնակելի տուն Անտառամուտ համայնք 4 փողոց 1 փակուղի 2 և անասնագոմ՝ 4 փողոց 1 փակուղի 1:

6.ՈՒԺը կորցրած ճանաչել Անտառամուտ համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 4-ի << Լոռու մարզի Անտառամուտ համայնքի 06-015-0033-0003 ծածկագրի տակ գտնվող գործող անասնագոմի և հողամասի նկատմամբ հողահատկացման հիմքերը վերականգնելու և սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> 08-Ա որոշումը :

ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ